ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.09.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/139

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ ԳԱԱ «Երկրաբանական գիտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ
Մասնակից՝ «Հովհաննես Աղաբեկյան» Ա/Ձ

Մասնակցությամբ՝
«Հովհաննես Աղաբեկյան» Ա/Ձ-ի ներկայացուցիչ՝ Դ. Միլիտոնյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵԳԻ-ԳՀԱՊՁԲ-19/3» ծածկագրով գնանշման հարցում, համակարգչային և պատճենահանման սարքավորումներ և օժանդակ նյութերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 26.08.2019թ.-ի թիվ 26/26-1/14154-2019 գրությամբ «Հովհաննես Աղաբեկյան» Ա/Ձ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԳԱԱ «Երկրաբանական գիտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ-ի 16.08.2019թ. գրության հիման վրա, 26.08.2019թ. «Հովհաննես Աղաբեկյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 27.08.2019թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 05.09.2019թ.-ին և 18.09.2019թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 18.09.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 26.09.2019թ.-ին:

2. **<u>ՀՀ ԳԱԱ «Երկրաբանական գիտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

ՀՀ ԳԱԱ «Երկրաբանական գիտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ-ն 16.08.2019թ. գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում ենք, որ ՀՀ ԳԱԱ «Երկրաբանական գիտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ-ը իր կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումներ և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպել է «ԵԳԻ-ԳՀԱՊՁԲ-19/3» ծածկագրով գնման ընթացակարգ: Ընթացակարգի մասնակիցներից Ա/Ձ Հովհաննես Աղաբեկյանը ընտրված մասնակից է ճանաչվել 8 և 14-րդ չափաբաժինների մասով, 12,13,15-րդ չափաբաժինների մասով մերժվել է համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1 կետի (գնային առաջարկները գերազանցել է գնման առարկաների նախահաշվային արժեքները): Մասնակիցը բողոքարկել է 12,13,15-րդ չափաբաժինների մասով, որ չի կանչվել բանակցությունների:

Բողոքը քննող անձի կողմից 17.07.2019թ. ֆինանսների նախարարության www.gnumner.am կայքում հրապարակված ԳԲՔԱ-ՆԳ-2019/40 որոշման համաձայն Ա/Ձ Հովհաննես Աղաբեկյանի կողմից 14.06.2019թ. ներկայացված բողոքը մերժվել է:

«ԵԳԻ-ԳՀԱՊՁԲ-19/3» ծածկագրով մրցույթի 8-րդ և 14-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից Ա/Ձ Հովհաննես Աղաբեկյանը ծանուցվել է 19.07.2019թ. պայմանագիր կնքելու մասին և ուղարկվել է պայմանագրի նախագիծը: Մասնակիցը մինչև օրս չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագիրը:

Խնդրում ենք օրենքով սահմանված կարգով Ա/Ձ Հովհաննես Աղաբեկյանին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:»:

Միևնույն ժամանակ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, ներկայացրել են թիվ «ԵԳԻ-ԳՀԱՊՁԲ-19/3» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Հովհաննես Աղաբեկյան» Ա/Ձ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք կցվել են ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրությանը:

3. <u>«Հովհաննես Աղաբեկյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 28.08.2019թ. գրությամբ դիմել է «Հովհաննես Աղաբեկյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.08.2019թ.-ի թիվ 26/26-1/14154-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Մասնակցի գրավոր կարծիքը:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք:

Ներկայանալով նիստին Մասնակցի ներկայացուցիչը հայտնեց, որ հայցադիմում են ներկայացրել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան:

4. <u>ՍՑ-LO-2019/139 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ ԳԱԱ «Երկրաբանական գիտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից իր կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումներ և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵԳԻ-ԳՀԱՊՁԲ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Հովհաննես Աղաբեկյան» Ա/Ձ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 10.06.2019թ.-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է 8-րդ և 14-րդ չափաբաժնների մասով ընտրված/հաղթող/ մասնակից ճանաչել «Հովհաննես Աղաբեկյան» Ա/Ձ-ին:

Պատվիրատուն 18.07.2019թ.-ին թիվ 5224 217 գրությամբ պայմանագիր կնքելու նպատակով ծանուցել է Մասնակցին:

Պատվիրատուն 18.07.2019թ.-ին թիվ 5224 217 գրությամբ Մասնակցին հայտնել է հետևյալը. *«Սույնով ծանուցում ենք, որ «ԵԳԻ-ԳՀԱՊՁԲ-19/3» ծածկագրով 2019թ. հուլիսի 18-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովի կողմից ընդունված որոշմամբ մրցույթի 8 և 14-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից է ճանաչվել Ա/Ձ Հովհաննես Աղաբեկյանը և վաստակել 774000 (յոթ հարյուր յոթանասունչորս հազար) ՀՀ դրամի ապրանքներ մատակարարելու իրավունքը:*

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածը՝ Ձեզ հետ կարող է «ԵԳԻ-ԳՀԱՊՁԲ-18/3-3» պայմանագիրը կնքվել օրենքով չարգելված ցանկացած ձևով 77.400 (յոթանասունյոթ հազար չորս հարյուր) ՀՀ դրամի չափով պայմանագրի կատարման ապահովում ներկայացնելու դեպքում:

Համաձայնության դեպքում խնդրում ենք «Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում ներկայացնել պայմանագրի կատարման ապահովումը՝ պայմանագիր կնքելու համար կամ Ձեր կողմից ընդունվող որոշման մասին տեղեկությունները ներկայացնել ՀՀ ԳԱԱ «Երկրաբանական գիտությունների ինստիտուտ»

ՊՈԱԿ-ին: ՀՀ ԳԱԱ «Երկրաբանական գիտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է hdallakyan@sci.am: հեռ.՝ (055) 64-79-55:»:

Մասնակիցը պայմանագրի նախագծի ծանուցման հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագրի 2 օրինակը և վճարման պահանջագիրը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.08.2019թ.-ի թիվ 26/26-1/14154-2019 գրությամբ «Հովհաննես Աղաբեկյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում:

Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը.

Նույն կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերոնշյալ իրավակարգավորումների համադրված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա

ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն ու պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են, որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ իր գործողություններով (անգործությամբ) պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ ԳԱԱ «Երկրաբանական գիտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կողմից իր կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումներ և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵԳԻ-ԳՀԱՊՁԲ-19/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրած «Հովհաննես Աղաբեկյան» Ա/Ձ-ն, Հանձնաժողովի 10.06.2019թ.-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության հիման վրա, ընտրված/հաղթող/ մասնակից է ճանաչվել 8-րդ և 14-րդ չափաբաժնների մասով:

Պատվիրատուն 18.07.2019թ.-ին թիվ 5224 217 գրությամբ պայմանագիր կնքելու նպատակով ծանուցել է Մասնակցին, սակայն վերջինս պայմանագրի նախագծի ծանուցման հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ներկայացրել իր կողմից հաստատված պայմանագրի 2 օրինակը և վճարման պահանջագիրը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Հովհաննես Աղաբեկյան» Ա/Ձ-ն, որպես ընտրված/հաղթող/

մասնակից, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով պայմանագիրը և/կամ պայմանագրի ապահովումը, հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 26.08.2019թ.-ի թիվ 26/26-1/14154-2019 գրությամբ «Հովհաննես Աղաբեկյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Հովհաննես Աղաբեկյան» Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**